



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 մայիսի 2024 թվականի N 657 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1448-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և «Մանդատների անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Մանդատների անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիաների նշանակման կարգը սահմանելու մասին» N 1448-Ն որոշման՝

1) վերնագիրը, 1-ին կետը, 1-ին կետով սահմանված հավելվածի վերնագիրը և 1-ին կետը «ռեֆերենս» բառից հետո լրացնել «պետական» բառով.

2) 1-ին կետով սահմանված հավելվածի 2-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի որոշակի ցու-

ցանիշների՝ այլ լաբորատորիաների կողմից կատարված փորձարկումների (չափումների) արդյունքների ճշգրտության և արժանահավատության հաստատում կամ հերքում.»),

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) ռեֆերենս գործունեության ոլորտում իրականացված փորձարկումների (չափումների) իրարամերժ արդյունքների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետությունում ռեֆերենս լաբորատորիայի կողմից տրամադրված փորձարկումների (չափումների)՝ որպես վերջնական և հավաստի արդյունքի ապահովում և ընդունում.».

3) ամբողջ տեքստում «հետազոտություններ (փորձարկումներ)» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «փորձարկումներ (չափումներ)» բառերով՝ համապատասխան հոլովածներով.

4) 4-րդ կետի «սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի» բառերը փոխարինել «էկոնոմիկայի նախարարության» բառերով.

5) 5-րդ կետի «հետազոտական» բառը փոխարինել «փորձարկման (չափման)» բառերով.

6) 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Ռեֆերենս լաբորատորիան չի կարող իրականացնել նույն նմուշի ընթացիկ և ռեֆերենս փորձարկումներ (չափումներ): Ռեֆերենս լաբորատորիայի կողմից ռեֆերենս գործունեության ոլորտում իրականացրած փորձարկումը (չափումը) հանդիսանում է վերջնական:

7. Ռեֆերենս լաբորատորիաները ոչ ռեֆերենս հետազոտության գործառույթների շրջանակներում կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:».

7) 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ».

8) 8-րդ կետից հասնել «ու եզրույթներն» բառերը.

9) 8-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-6-րդ ենթակետերով և 8.1-ին կետով՝

«4) ռեֆերենս լաբորատորիայի նշանակում՝ սույն կարգի իմաստով ռեֆերենս ոլորտում փորձարկման լաբորատորիային ռեֆերենս գործառույթների իրականացման լիազորության վերապահում.

5) ռեֆերենս նմուշ՝ վիճահարույց հարցերի առաջացման դեպքում լաբորատոր նմուշի հետ նույն ժամանակ և նույն պայմաններում պատրաստված արտադրանքի նմուշ, որն ընդունվում է նմուշառման մասնակիցների կողմից՝ կիրառելու որպես լաբորատոր նմուշ».

6) լաբորատոր նմուշ՝ նմուշառման մասնակիցների կողմից լաբորատոր հետազոտության համար նմուշառված արտադրանք:

8.1. Սույն կարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Հավատարմագրման մասին» օրենքներով սահմանված իմաստը և նշանակությունը:».

10) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. Ռեֆերենս լաբորատորիա նշանակվելու համար լաբորատորիան պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

1) պետք է լինի հավատարմագրված և նշանակված՝ հավատարմագրման և տեխնիկական կանոնակարգման ոլորտներում գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.

2) ներառված լինի «Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստր»-ում.

3) ունենա ռեֆերենս գործունեության ոլորտում լաբորատոր փորձարկումների իրականացման և արդյունքների վերլուծության առնվազն 5 տարվա փորձ, համապատասխան որակավորում ունեցող իրազեկ աշխատակիցներ.

4) ունենա անհրաժեշտ տարածքներ՝ ռեֆերենս գործունեության ոլորտում փորձարկումների (չափումների) իրականացման և սարքավորումների տեղակայման համար.

5) ունենա չափումների միասնականության ապահովման ոլորտում գործող օրենսդրության համապատասխան հավաստված ստանդարտ նմուշներ (չափանմուշներ), աշխատանքային չափանմուշներ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային ստանդարտին համաձայն հավատարմագրված մարմնի կողմից պատրաստված չափանմուշներ.

6) ունենա ռեֆերենս նյութերի ձեռքբերման, ռեֆերենս նյութերի և ռեֆերենս նմուշների պահպանման և օգտագործման ընթացակարգեր.

7) ունենա չափումների անորոշության գնահատման ընթացակարգեր.

8) երաշխավորի ռեֆերենս գործունեության ոլորտում ռեֆերենս նմուշների և ռեֆերենս նյութերի հետազոտությունների (փորձարկումների) և չափումների իրականացման ինքնուրույնություն՝ չընդգրկելով այլ փորձարկման լաբորատորիաների.

9) երաշխավորի ռեֆերենս գործունեության ոլորտում իրենց անկախությունը և անկողմնակալությունը, այն է՝ ռեֆերենս լաբորատորիան պետք է անկախ լինի փորձարկվող արտադրանքի արտադրողից, մատակարարից, իրացնողից, չի կարող հանդես գա որպես արտադրանքի նախագծող, արտադրող, մատակարար, տեղադրող, սեփականատեր կամ որպես նշված կողմերից մեկի նշանակված լիազոր ներկայացուցիչ կամ անմիջականորեն ներգրավված լինի համապատասխան արտադրանքի արտադրման կամ ստեղծման, շուկայահանման, տեղադրման, վաճառքի աշխատանքների մեջ.

10) երաշխավորի ռեֆերենս գործունեության ոլորտի մասին անհրաժեշտ տեղեկատվության թափանցիկությունն իր պաշտոնական կայքէջում.

11) երաշխավորի մասնակցություն ռեֆերենս գործունեության ոլորտում ոչ ուշ, քան 2 տարին 1 անգամ որակավորման ստուգման ընկերությունների կողմից կազմակերպվող որակավորման ստուգմանը՝ ապահովելով դրական եզրակացության առկայություն:»:

11) 11-րդ կետի, 12-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի «հետազոտություններ» բառն իր հոլովաձևերով փոխարինել «փորձարկումներ (չափումներ)» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

12) 12-րդ կետի 7-րդ ենթակետի «9-րդ կետի 1-14-րդ ենթակետերում» բառերը փոխարինել «9-րդ կետում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 90-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՒՏՎԱՐՉԱԳԵՏ
Երևան

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ